1. ԳԱՌՆԻՆ ԸՍՏ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

Գառնիի մասին մատենագրական տեղեկություններ պահպանել են հայ և օտարազգի հեղինակները։ Այդ տեղեկությունները վերաբերում են Գառնիի հիմնադրմանը, այստեղ կատարված շինարարությանը, ամրոցի հետ կապված քաղաքական անցքերին, շոշափում են Գառնի գյուղաքաղաքի տնտեսական կյանքի առանձին կողմերը։

Օգտվելով ժողովրդական ավանդություններից, պատմահայր Մովսես Խորենացին Գառնիի հիմնադրումը վերագրում է Հայկ նահապետի հեռանորգների առասպելական ժամանակներին։ Նրա ասելով, Հայկի թոռ Ամասիայի որդի Գեղամը բնակություն հաստատելով Սևանա լճի ափին, «գառնայ անգրէն ի գաշտ անգր, և առ ուտամբ նորին լերինն [Գեղ] ի ձորակի միում ամրոց շինէ ձեռակերտ մի, և կոչէ զանուն նորա Գեղամի, որ յետոյ ի Գառնկայ թոռանէ նորա անուանեցաւ Գառնի»[1]։ («Գառնում է այնտեղից մի դաշտի մեջ և նույն [Գեղ] լեռան սառրոտում, ամուր ձորակի մեջ շինում է մի ձեռակերտ և իր անունով կոչում է Գեղամի, որը հետո նրա Գառնիկ թոռան անունով անվանվեց Գառնի»)։

1346 թ. արտագրված մի ձեռագիր հիշատակարանում կարդում ենք. «ԲՌ էՃ և ԺԷ ամով յառաջ քան զհայ թուականն շինեցաւ գեղաքաղաքն Գառնի ի Գեղամայ և ի Գառնկոյ»[2]։ («2717 տարի առաջ քան հայ թվականը (այսինքն՝ 2166 թ. մ. թ. ա.) շինվեց Գառնի գյուղաքաղաքը Գեղամի և Գառնիկի կողմից»)։

Սրանք, իհարկե, ավանդական տվյալներ են, որոնք, ստկայն, ընդգծում են Գառնիի շատ հին բնակավայր լինելու հանգամանքը։

Պեղումները ևս ցույց են տալիս, որ Գառնիում բնակությունը սկսվել է շատ վաղ ժամանակներում, իսկ սրբատաշ քարերից կանգնեցված ամրոցը կառուցվել է բրոնզեդարյան ամրոցի տեղում, հավանաբար III դարում մեր թվագրությունից առաջ։

Բարձր արվեստով կառուցված այդ ամրոցը կանգուն էր, երբ առաջին դ.սրի կեսերին դարձավ որոշ պատմական անցքերի կենտրոն։ Այդ ժամանակ հայկական ռահի վրա հռոմեացիների օգնությամբ նստել էր վրաց Փարասման թագավորի եղբայր Միհրդատը։ Փարասմանի որդի Հռադամիզդը գավադրություն կազմակերպելով իր հորեղբայր Միհրդատի դեմ և ձգտելով խլել նրանից գահը, գորքով գալիս է Միհրդատի վրա։ Վերջինս չկարողանալով

---

1 Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 41։

2 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանները, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, 1950, էջ 351։

դիմադրել իր ախոյանին, ամրանում է Գառնի ամրոցում։ Հռադամիզդը պաշարում է ամրոցը, բայց չի կարողանում գրավել այն։ Նկարագրելով այս անցքերը, հռոմեացի պատմիչ Կոռնելիոս Տակիտոսը ասում է, թե այդ բերդը ամուր էր իր անդադրությամբ[1]։

Միհրդատը բարձրանալով հայկական գահի վրա, շանում էր վարել ինքնուրույն քաղաքականություն, որը ձեռնտու չէր հռոմեացիներին, ուստի հռոմեական զորավարներն օժանդակում էին Հռադամիզդին։ Վերջինս զենքի ուժով չկարողանալով գրավել Գառնին, հաշտության պատրվակով, իր մոտ է հրավիրում Միհրդատին։ Հռոմեական կայազորի կաշառված հրամանատար Կեյիուս Պոլլիոնի ճնշման տակ Միհրդատը դուրս գալով ամրոցից, ուխտադրժորեն սպանվում է, իսկ Հռադամիզդը տիրում է հայկական գահին։ Բնորոշ է թե ի՞նչ դիրք են բռնում այս անցքերի նկատմամբ հռոմեական զորավարները։ Տակիտոսը պատմում է, թե Ասորիքի հռոմեական կուսակալ Կվադրատոսը տեղեկանալով Միհրդատի սպանության մասին, հրավիրում է խորհուրդ, հաղորդում է եղելությունը և կարծիք հարցնում, թե արդյոք անհրաժեշտ չէ՞ պատժել մեղավորներին։ Սակայն պետության հասարակական պատվի սասին քչերն էին հոգում։ Շատերն ասում էին, որ օտարների սեն մի ոճրագործություն պետք է ընդունվի որպես ուրախությամբ, որ անհրաժեշտ է նույնիսկ նրանց մեջ ատելության սերմեր ցանել, ինչպես այդ հաճախ արել են հռոմեական կայսրները, բարբարոսների մեջ երկպառակություններ առաջ բերելու համար։ Խորհուրդը հայտնեց այն կարծիքը, որ ավելի լավ է, որ Հռադամիզդն իշխանության է հասել հանցանքով, այլ ոչ փառքով։

Այս կարծիքին հավանություն տրվեց[2]։ Նվաճված կամ իրենցից կախյալ երկրների միշտ ատելություն և թշնամանք սերմանելը հռոմեացիների սիրած քաղաքականությունն էր, որը ցայտուն կերպով դրսևորվել է հայկական գահի շուրջը տեղի ունեցող խժդժությունների կապակցությամբ։

Նույն առաջին դարի 50-ական թվականներին հռոմեացիները գրավել էին Հայաստանը, բայց հանդիպելով հայերի և սրանց դաշնակից պարթևների դիմադրությանը, ստիպված էին նահանջել և հեռանալ երկրի սահմաններից։ 59 թ. Հայաստանի մայրաքաղաք Արտաշատից նահանջելուց առաջ հռոմեացիները հիմնահատակ ավերեցին և հրկիզեցին այն և, ինչպես երևում է, նրանք չխնայեցին նաև մայրաքաղաքի պաշտպանության հյուսիս-արևելյան հենակետ հանդիսացող Գառնի ամրոցը։

63 թ. հռոմեական լեգիոնները ծանր և ամոթալի պարտություն կրեցին Հռանդեայի ճակատամարտում (այժմյան Խարբերդ քաղաքի մոտերքը) և դուրս շպրտվեցին Հայաստանից։

Հայկական գահի վրա բարձրացած Տրդատ Ա թագավորի օրոք վերաշինվեցին ինչպես Արտաշատ մայրաքաղաքը, նույնպես և Գառնի արքայական ամրոցը։ Ահա, այս ժամանակ է վերականգնվել Գառնի ամրոցի հզոր պարիսպը։ Ամենայն հավանականությամբ Տրդատն է կառուցել տվել նաև Գառնիի հեթա-

---

[1] Tac. Annales, XII, 45.

[2] Tac. Annales, XII, 48 (օգտագործված է Հ. Մանանդյանի թարգմանությունը (Քննական տեսություն հայ ժող. պատմության, հատ. Ա, էջ 322), որը համեմատված է Լատիշևի թարգմանության հետ։ ВДИ, № 3, 1945։

նոսական տաճարը, որը չորս կողմից սյուներով շրջապատված է շքեղորեն քանդակազարդված շենք է եղել՝ կանգնած բարձրադիր հարթակի վրա։

Նկարագրելով այս շինարարությունը Մովսես Խորենացին գրում է.

«Զայսու ժամանակաւ կատարէ Տրդատ զշինուած ամրոցին Գառնւոյ, զոր որձաքար և կոփածոյ վիմօք, երկաթագամ և եապարով մտծուցեալ. յորում շինեալ է տուն հովանոց, մահտրձանօք, սքանչելի գրոշուածովք, բարձր քանդակաւ ի համար քեռ իւրոյ Խոսրովիդխտոյ, և գրեալ ի նմա զյիշատակ իւր հելլենացի գրով»[1]։

(«Այս ժամանակներում Տրդատն ավարտեց Գառնի ամրոցի շինությունը՝ որձաքար և տաշած վեմերով, երկաթագամ և կապտրով ամրացված, որի մեջ կառուցեց նաև առն հովանոց, սյունազարդ, սքանչելի փորագրություններով և բարձր քանդակով, իր քույր Խոսրովիդուխտի համար և դրեց նրա վրա իր հիշատակը հունական գրերով»)։

Այս վկայությունից երևում է, որ Մովսես Խորենացին ամրոցի և նրա մեջ գտնվող սյուներով ու բարձրադիր քանդակներով զարդարված հովանոցի շինությունը վերագրում է Տրդատ Գ-ին։ Սակայն գրան հակասում են, ինչպես ամրոցի պարսպի և հեթանոսական տաճարի շինարարական արվեստի առանձնահատկությունները, նույնպես և այն հանգամանքը, թե արքայական այդ կարեոր ամրոցը կարող է՞ր մինչև Տրդատ Գ-ի ժամանակները, այսինքն, տվելի քան երկու դար ավերակ ու ամայի մնալ։ Բերդի պարսպի և հեթանոսական տաճարի շինարարական արվեստի քննությունը ցույց է տալիս, որ ամրոցը վերաշինվել է ոչ թե Տրդատ Գ-ի ժամանակ, III դարի վերջին կամ IV դարի սկզբներին, այլ հայ Արշակունիների թագավորության հիմնադիր Տրդատ Ա-ի ժամանակ։ Գառնիում 1945 թ. գտնված հունարեն արձանագրության մեջ ասված է, թե ամրոցը կառուցվեց Տրդատի թագավորության 11-րդ տարում։ Եթե ընդունենք, որ արձանագրությունը թողել է Տրդատ Ա-ը, ապա ամրոցի վերաշինության ժամանակը կլինի մեր թվականության 77 թ., այսինքն՝ ավերվելուց 18 տարի հետո։

Հետագայում ևս Գառնիում կառուցվել են պալատական շենքեր, արքայական ոտընիք՝ խճանկար (մոզայիկ) հատակով, ընակելի շենքեր, զորանոցներ։ Այս շենքերի մի մասը կառուցվել է Տրդատ Գ-ի ժամանակ, որին սխալմամբ վերագրվել է նաև ամրոցի և հեթանոսական տաճարի շինությունը։

Գառնին իբրև արքունի ամրոց հիշատակում է նաև Փավստոս Բուզանդը, որը պատմելով Խոսրով Բ Կոտակի (332—338) ժամանակ Դվինի հիմնադրումից հետո անտառի տնկման մասին ասում է. «Եւ ետ հրաման թագաւորն զօրավարին իւրոյ՝ հանել խաշար յաշխարհէն բալում, և բերել զվայրենի կաղին մայրեաց, և տնկել զայն յայրարատեան դաշտին. և առեալ յամուր բերդէն արքունի, որում կոչեն Գառնի, մինչև ի դաշտն Մեծամորի ի բլուրն՝ որ անուանեալ կոչի Դուին, որ կայ ի հիւսիսոյ կողմանէ քաղաքին մեծի Արտաշատու, զգետն խոնարհ մինչև յապարանսն Տիկնունի՝ տնկեցին զկաղինն։ Եւ կոչեաց զանուն նորա Տաճար մայրի»[2]։

---

1 Մովսես Խորենացի, Պատմութիւն, Տփղիս, 1913, էջ 241—242։

2 Փաւստոս Բուզանդ, Վենետիկ, 1889, էջ 18։

(«Եվ հրաման տվեց թագավորը յուր զորավարին՝ մեծ թվով խաշար հանել[1] աշխարհից և անտառների վայրի կաղին բերել ու տնկել այն Այրարատյան զավառում։ Եվ սկսած արքունի ամուր բերդից, որը Գառնի են անվանում, մինչև Մեծամորի դաշտը և այն բլուրը, որը կոչվում է Դվին և որը դտնվում է Արտաշատ մեծ քաղաքի հյուսիսային կողմում, դետով դեպի ցած մինչև Տիկնունի ապարանքը տնկեցին կաղինը։ Եվ նրա անունը կոչվեց Տաճար մայրի»)։

Նույն IV դարում Գառնիում նստում էր Գեորգ անունով եպիսկոպոսը[2]։ Դա նշանակում է, թե Գառնին իբրև արքայական ամրոց և աշքի ընկնող ավան փոքր ի շատե կարևոր կենտրոն էր համարվում։

Գառնի գյուղում պահպանվում են շատ հնատիպ, արտաքին սյունասրահով բազիլիկ մի շենքի ավերակները (տեղացիները անվանում են Խոնարհ եկեղեցի, այսինքն կործանված, ավերված եկեղեցի), որը կարող է IV—V դարի եկեղեցու մնացորդները լինել։

Արշակունյաց թագավորության անկումից հետո, թագավորական ամրոց-զորակայաններում, դրանց թվում նաև Գառնիում հաստատվել էին Պարսից զորքերը։ Դա պարզ երևում է Եղիշեի մի վկայությունից. պատմելով 450—451 թթ. ժողովրդական ապստամբության եղելությունների մասին, Եղիշեն ասում է, թե ապստամբները «յարձակեցան ի վերայ բերդիցն և աւանաց, զոր ունէին Պարսիկքն ի տեղիս տեղիս, յամրոցս աշխարհին. ապալէին, քանդէին զբնակութիւնս նոցա։ Առաջին ղմեծն Արտաշատ յանդերձ աւանօք իւրովք և առնուին զանմատոյց ամուրսն՝ զԳառնի քաղաքն, զԱնին, զԱրտագերս և զուանս իւրեանց...»[3] և այլ ամրոցներ։ («Հարձակվեցին այն բերդերի և ավանների վրա, որոնք տեղ-տեղ դրավել էին պարսիկները, տապալեցին, քանդեցին նրանց բնակությունը։ Առաջին հերթին՝ մեծ Արտաշատը հանդերձ իր ավաններով. և դրավեցին անմատչելի ամրոցները՝ Գառնի քաղաքը, Անին, Արտագերսը և իրենց ավանները»)։

Այստեղ Գառնիին տրված է առաջնություն Արտաշատ մայրաքաղաքից հետո, ըստ որում ասվում է, թե ապստամբները գրավեցին Գառնի քաղաքը։

Վասակ Սյունին, որը երկրի մարզպանն էր և սկզբում ապստամբության ղեկավարներից մեկը, դավաճանելով անցնում է պարսիկների կողմը և ավերում է «զբաղում տեղիս Հայոց աշխարհին, մանաւանդ զամերոցս արքունի, որ կայանք զօրացն էին, զԳառնի և զԵրամաւնս և զԴրասխանակերտն՝ զմեծ դաստակերտն, զՎարդանաշատն և զամուրն Օշական, զՓառախոտն, զՍարդեանսն, զՁողակերտն աւան և զբերդն Արմաւրի, զԿուաշն աւան, զԱրուճն, զԱշնակն...»[4]։ (տվերում է «Հայոց աշխարհի բազմաթիվ վայրերը, մանավանդ արքունի ամրոցները, որոնք զորակայաններ էին՝ Գառնին, Երամոնսը և Դրասխանակերտ մեծ դաստակերտը, Օշական ամրոցը, Փառախոտը, Սարդյանը, Ձողակերտ ավանը, Արմավիրի բերդը, Կուաշ ավանը, Արուճը, Աշնակը...»)։

Թվարկված այս վայրերը արքայական տանը պատկանող կալված դաստակերաներ ու ամրոց-զորակայաններ էին, որոնք շրջան կազմելով Արարատ-

---

1 Խաշար հանել։ նշանակում է բնակչությանը պարտադիր կերպով աշխատանքի հանել՝ արքունիքի կողմից ձեռնարկվող աշխատանքները կատարելու համար։

2 Ինճիճեան, Հնախօսութիւն, հատ. Գ, էջ 385, Ալիշան, Այրարատ, էջ 362։

3 Եղիշէի Վասն Վարդանանց և Հայոց պատերազմին, Երևան, 1957, էջ 68։

4 Նույն տեղում, էջ 78—79։

յան դաշտի շուրջը, պաշտպանում էին տես արգավանդ և խիտ բնակեցված դաշտավայրը Արտաշատ և Կաղարշապատ մայրաքաղաքներով հանդերձ։

Եղիշեի վկայություններբի համաձայն 450—451 թթ. Գառնի ամրոցը ավերածություններբի է ենթարկվել, բայց Եղիշեն որոշակի ասում է, թե ավերվել էր ամրոցի բնակությունը, այսինքն, բնակության համար կառուցված շենքերը, իսկ ամրոցի պարսպի մասին ոչինչ չի նշում։ Հավանաբար պարիսպը չի քանդվել և ամրոցը, ինչպես և 481—484 թթ. ապստամբություններից հետո էլ մնացել է իբրև կարևոր զորակայան։ Դա երևում է Սեբեոս պատմիչի մի վկայությունից, որի համաձայն պարսից Խոսրով թագավորի ժամանակ՝ VI դարի վերջերին Գառնիում հաստատված պարսից զորքերը ապստամբում և սպանում են Հայասաանի սահմանակալ կամ մարզպան Խորականին[1], 591 թ., երբ Հայաստանը բաժանվեց պարսիկների և բյուզանդացիների միջև, ապա Բյուզանդիային անցան զգալի աբրիտորիաներ, որոնց թվում՝ ասանուտերական տունը (Այրարատյան գաշտը) «մինչև ցգետն Հուրազդան, և զգաւառն Կոաէից մինչև ցաւանն Գառնի...»[2]։ Ուշագրավ է, որ այսաեղ Գառնին ավան է կոչված։

607 թ. Աբրահամ կաթողիկոսի Դվինում գումարած եկեղեցական ժողովին մասնակցել են բազմաթիվ եպիսկոպոսներ, «վանից երեցներ», որոնց թվում նաև «Դաւիթ Երևանայ, Իսմայէլ Գառնոյ» վանից երեցները[3]։ Ուրեմն Արշակունյաց թագավորության անկումից հետո Գառնիում այլևս եպիսկոպոս չէր նստում, բայց Գառնիի վանքի առաջնորդը մասնակից էր լինում կարևորագույն եկեղեցական գործերի քննարկմանը, տվյալ դեպքում, Դվինի եկեղեցական ժողովին, որը հակառակ Մորիկ կայսեր ձգտումներին, մի անգամ ևս մերժում է քաղկեդոնականությունը։

Հայասաանի վրա գործած արշավանքների ժամանակ արաբները Հարիր իբն-Մասլամայի գլխավորությամբ (VII դարի կես) գրավեցին Դվինը և այնաեղից անցան Գառնի (Ջուրնի), ապա Աշոցք գավառ[1]։

Այս կապակցության մեջ Գառնին ներկայանում է իբրև կտրևոր ամրություն և կենարոն։ Հայտնի է, որ արարները ավերել են Գառնի ամրոցը, բայց ե՞րբ, VII դարի կեսերին Հարիր իբն-Մասլամայի արշավանքների ժամանակ, որ պակաս հավանական է, թե VII դարի վերջերին—VIII դարի սկզբներին, երբ նրանք վերջնականապես գրավեցին Հայաստանը՝ ստույգ հայտնի չէ։ Համենայն դեպս VIII—IX դարերում Գառնի ամրոցը ավերակ է եղել և պարսպի քարերից շատերը տարվել, օգտագործվել են իբրև գերեզմանաքարեր ու նրանց վրա փորագրվել է VIII—IX դարերի համար բնորոշ իաչեր։ Ինչ վերաբերում է Գառնի ավանին, ապա նա պահպանում է իր գոյությունը նաև ամրոցի ավեր ժամանակ։

Արարական տիրապետության ժամանակաշրջանում նախկին թագավորական ամրոց, ապա մարզպանական զորքերի զորակայան Գառնին, անցնում է Սյունյաց իշխաններին և մնում է նրանց ձեռքում մինչև Բագրատունի Աշոտ Բ թագավորի ժամանակները։

---

1 Սեբեոս, Պատմութիւն, Երևան, 1939, էջ 31։

2 Նույն տեղում, էջ 47։

3 Գիրք թղթոց, էջ 151։

[1] Ах. Беладзори, из соч. „Книга завоевания стран", перевод проф. П. К. Жузе, Баку, 1927, стр. 10—11.

VIII դարի 30-ական թվականներին Գառնիի դեղանիստ ձորի մի քարայրում ճգնում էր Սյունյաց Ստեփանոս եպիսկոպոսի քույր Սահակադուխտը, որը աչքի ընկնող երաժիշտ էր և բանաստեղծուհի։ Խոսելով Ստեփանոս Սյունեցու մասին, Սեբեոսը Օրբելյանը ավելացնում է. «էր եւ սորա քույր մի՝ ի մանկութենէ սաացեալ զվարս կուսութեան և առանձնացեալ ի ձորակին Գառնոյ յայրի միոջ, և անտանելի վարս ճգնութեան կրէր յանձին. որոյ անուն Սահակադուխտ։ Սա յոյժ հմուտ էր երաժշտական արհեստին, որ և ի ներքոյ վարագուրի նստեալ ուսուցանէր բազումս։ Եւ արար կցուրդս և մեղեդիս քաղցրեղանակս, յորոց մին՝ սրբուհին Մարիամ, որ իւրով անուամբն է յօրինեալ»[1]։ («Սա ուներ մի քույր, մանկությունից կուսության վարքը ստանձնած և առանձնացած Գառնի ձորակի մի քարայրի մեջ՝ ճգնության անտանելի կյանք էր վարում, որի անունն էր Սահակադուխտ։ Սա շատ հմուտ էր երաժշտական արվեստին, որը և սովորեցնում էր ջաաերին՝ նստած վարագույրի ետեում։ Եվ (նա) սաեղծեց քաղցրեղանակ մեղեդիներ և կցուրդներ, որոնցից մեկն էր Մարիամ սրբուհին, որը իր անունով է հորինված»)։

Գառնի ավանը և վանքը VIII—IX դարերում տվել են խոշոր եկեղեցական գործիչներ։ VIII դարի վերջերին (791) Հակոբ կաթողիկոսի մահից հետո «զՍողոմոն ածեալ կացուցանեն յաթոռ սրբութեանն։ Սա էր ի քաղաքագիւղէն Գառնւոյ, և ի մանկութենէ առեալ էր զլուծ կրօնաւորութեան կարգի... այլև վարժեալ իսկ էր ի փիլիսոփայական արուեստս և առաւել ևս հմուտ լեալ փսաղտութեան կրթանաց[2]»։ («Սողոմոնին բերեցին և հաստատեցին սուրբ աթոռի վրա։ Սա Գառնի քաղաքագյուղից էր և մանկությունից ստանձնել էր կրոնավորության կարգի լուծը... վարժված էր նաև փիլիսոփայական արվեստի և առավել ևս հմտացած սաղմոսերգության կրթության մեջ»)։ IX դարի վերջին քառորդում (877—897) Հայաստանի կաթողիկոսն էր Գեորգը, «որ էր ի գիւղաքաղաքէն Գառնւոյ»[3]։ Ստեփանոս Տարոնացին ևս Գեորգի աթոռակալությունը հիշատակելով ասում է, թե «սա էր ի գիւղաքաղաքէն Գառնւոյ»[4]։ Սամվել Անեցին և Կիրակոս Գանձակեցին նույն կապակցությամբ Գառնին անվանում են գյուղաքաղաք[5]։

Գեորգին հաջորդած Մաշտոց կաթողիկոսը մեռել և թաղվել է Գառնիում. Ասողիկի ասելով «մերձ առ հովանոցին Խոսրովիդխաոյ, զոր էր շինեալ Տրդատայ Հայոց արքայի»[6]։ («Խոսրովադխաի հովանոցի մոտ, որ շինել էր Տրդատ Հայոց արքան»)։

Նույնը գտնում ենք «Յայսմաւուրք»-ի հոկտեմբերի 13-ի ընթերցվելիքի մեջ, որտեղ ասված է, թե Մաշտոցը «վախճանեցաւ ի գիւղաքաղաքին Գառնի, և եդաւ պաառով մօտ ի հովանոց արքային Տրդատայ ի բերդն Գառնոյ։ ԳՃԽԶ թվ.»[7] («Վախճանվեց Գառնի գյուղաքաղաքում և պաավով թաղվեց Գառնի բերդում Տրդատ արքայի հովանոցի մոտ 346 (897) թվականին»)։

---

1 Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն, էջ 139։

2 Հովհաննես կաթողիկոս, Պատմութիւն, Թիֆլիս, 1912, էջ 110, տե՛ս նաև Սեբեոս Տարոնացի, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1888, էջ 106։

3 Հովհաննես կաթողիկոս, Պատմութիւն, էջ 137։

4 Ստեփանոս Տարոնացի, Պատմութիւն տիեզերական, էջ 110։

5 Սամուել Անեցի, Հաւաքմունք ի զրոց պատմագրաց, էջ 95, նաև Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 75։

6 Ստեփանոս Տարոնացի, Պատմութիւն տիեզերական, էջ 160։

7 Յայսմաւուրք հոկտեմբերի ԺԳ։

Կիրակոս Գանձակեցին ես ասում է, թե «եղաւ մարմին նորա (Մաշտոցի) ի դերեզմանի ի Գառնի հուպ առ զարմանալի թախտն Տրդատայ. և շինեցին ի վերայ նորա եկեղեցի վայելուչ»[1]։ («Նրա (Մաշտոցի) մարմինը դրվեց դերեզմանի մեջ Գառնիում Տրդատի զարմանալի թախտին շատ մոտ և շինեցին նրա վրա վայելուչ եկեղեցի»)։ Ուշադրավն այն է, որ Ասողիկը, «Ցամամաւուրքը» և Գանձակեցին Տրդատի հովանոցը նույնացնում են Գառնիի հեթանոսական տաճարի հետ, որի կողքին իրոք պահպանվում են Մաշտոցի արձանագիր տապանաքարը և մատուռի մնացորդները։

Մաշտոցի մատուռը, որը ավելի վաղ աղբյուրներում չի հիշատակված և որի մասին խոսում է Կիրակոս Գանձակեցին, X—XI դարերի շինություն է թվում։ Հավանաբար XIII դ. գործ է նաև Մաշտոցի տապանաքարը, թեև ունի ՅԽԶ (897) թվակիր արձանագրություն։

Գառնին իբրև գյուղաքաղաք հիշատակված է Հովհաննես կաթողիկոսի մի այլ վկայության մեջ ևս՝ Այրիվանքի հաբսաուությունները կողոպտելու կապակցությամբ։ Պատմիչն ասում է, թե վանքը գտնվում էր «յայրի անդ յարևելից հիւսիսոյ զեղաքաղաքին Գառնոյ»[2]։ Վկայություններ կան, որոնք ցույց են տալիս, թե Գառնի գյուղաքաղաքը նշանավոր էր նաև իր խաղողի այգիներով։

Մեջբերված վկայություններից երևում է, որ Գառնին IX դարում, ավելի սաուլդ, այդ դարի երկրորդ կեսում դառնում է գյուղաքաղաք։ X դարի և հետագայի պատմիչները նշում են հաակապես նրա գյուղաքաղաք լինելու հանգամանքը, որն ինչպես երևում է ավելի կարևոր էր նկատվում, իսկ ամրոցի մասին գրեթե չեն խոսում։ Հետագայում ևս Գառնին նշանակալից կերպով չաճեց և քիչ թե շատ աչքի ընկնող քաղաք չդարձավ։

Մատենագրական աղբյուրներում մինչև XV դարը Գառնին անվանվում է գյուղաքաղաք։ Իբրև այդպիսին նա վերջին անգամ չէր գրավում, ընդհակառակը, առավել խոշոր և նշանակալից գյուղաքաղաքներից մեկն էր և փաստորեն ոչնչով չէր տարբերվում միջնադարյան Հայաստանի փոքր քաղաքներից և լինելով ավանդական վայր նախկին թագավորական ամրոց, նույնիսկ նրանցից շատերից ավելի էր հայանի, ուստի և հաճախ է հիշատակվել գրավոր աղբյուրներում։

Գառնին բազմիցս հիշատակվում է IX—X դարերի անցքերի կապակցությամբ։ XI դարի հեղինակներից Գառնին հիշատակում է Սաեփանոս Տարոնացին, սակայն, IX դարի վերջերին տեղի ունեցած անցքերի կապակցությամբ, անվանելով այն գյուղաքաղաք[3]։ XII դարում նույնպես Գառնին գյուղաքաղաք է անվանված Հովսեփ Դվինցու (+ 1170) վկայության մեջ[4]։

Գառնիի վերաբերյալ ավելի շատ տեղեկություններ գտնում ենք XIII դարում։

XIII դարի 20-ական թվականներին Գառնիում տեղի է ունեցել պատմական մի նշանավոր անցք՝ ճակատամարտ Խորեզմշահ Ջալալեդդինի դեմ, որի վերաբերյալ տեղեկություններ հաղորդում են մի շարք հեղինակներ։

Պարտություն կրելով մոնղոլներից Խորեզմշահ Ջալալեդդինը խույս-

---

1 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 81։

2 Հովհաննես կաթողիկոս, Պատմութիւն, Թիֆլիս, 1912, էջ 338—339։

3 Սաեփանոս Տարոնացի, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 106, 111, 160։

4 Հայոց նոր վկաներ, Վաղարշապատ, 1903, էջ 60։

ավեց իրեն հետապնդող զորքերից՝ շարժվելով դեպի արևմուտք։ 20-ական թվականներին նա իր զորքերով սպանեց Անդրկովկասի երկրները։ 1225 թ. վրացական և հայկական զորքերը Գառնիում ճակատամարտի բռնվեցին Ջալալեդդինի հետ, սակայն, ճակատամարտը ողբերգական ելք ունեցավ։

Կիրակոս Գանձակեցին պատմում է, թե ինչպես Ջալալեդդինը Ասպատականի միջով մտնում է Աղվանք, գրավում է Գանձակը և ներխուժում Հայաստան։ Նրա դեմ շարժվում են վրաց զորքերը Իվանե Աթաբեկի գլխավորությամբ[1]։ Այնուհետև Կիրակոսը գրում է. «Եկն ապա սուլտանն ի գաւառն Կոտայից։ Գնաց ե Իւանէ զօրօքն վրաց, և կայր հանդէպ նոցա ի վերոյ. և տեսեալ զնոսա՝ զանգիտեաց, զետեղեալ ի տեզուջն։ Իսկ սուլտանն՝ յառաջ վարեալ զզօրս իւր, գայր հանդէպ նոցա։ Եւ իրրև զայն ետես իշխան մի յաւագացն վրաց, Շալուէ անուն նորա, և եղբայր իւր Իւանէ, արք քաջք և անուանիք, և յաղթողք ի պատերազմի, աւեն ցայլ զօրսն. «Դուք կացէք՝ մնացէք վայր մի, և մեք երթեալ իւանեսցուք ի նոսա. եթէ գարձուսցուք զոմանս ի նոցանէ յեաս, մե՛ր է յաղթութիւն, եկայք և դուք. ապա թէ նոքա մեզ յաղթիցեն, փախերուք դուք և ապրեցուցէք զանձինս ձեր»։

Եւ իրրև իւանեցան նոքա սկսան կոտորել զօրս սուլտանին։ Իսկ զօրն վրաց այնմ ուշ ո՛չ եդին, այլ փախեան ի տեզուջէ անաի, մինչև այր գընկեր ի փախուսա ո՛չ զիտէր. և երթեալք առանց ուրուք հալածելոյ ամենեքեան ի վախից ի վայր մզեալք՝ ի ձոր անդր լնուին ի գլուխս քաղաքագեղն Գառնւոյ։ Եւ իրրև տեսին զայն զօրքն սուլտանին, զհետ մտեալ՝ բազումս կոտորեցին, և զայլս գահավէժ արարին»[2]։

(«Սուլթանը եկավ Կոտայքի գավառը։ Գնաց նաև Իվանեն վրաց զորքով և կանգնեց նրանց հանդեպ՝ վերևից. և տեսնելով նրանց երկյուղեց՝ դիրք գրավելով այնտեղ. իսկ սուլթանը՝ հառաջ վարելով իր զորքերը գալիս է նրանց հանդեպ։ Եվ երբ այդ բանը տեսավ Շալվե անունով մի իշխան վրաց ավագներից և իր եղբայր Իվանեն, որոնք պատերազմներում հաղթող, տնվանի և քաջ մարդիկ էին, ասում են մյուս զորքերին. «Դուք այստեղ կացեք մնացեք մի առժամանակ, իսկ մենք գնանք խառնվենք նրանց. եթե նրանցից ոմանց փախուստի մատնենք (բառացի՝ ետ դարձնենք), հաղթությունը մերն է, եկե՛ք և դուք, իսկ եթե նրանք մեզ հաղթեն՝ դուք փախեք և փրկեցեք ձեր անձը»։ Եվ երբ նրանք խառնվեցին (թշնամուն) սկսեցին կոտորել սուլթանի զորքերին։ Իսկ վրաց զորքերը ուշադրություն չդարձրեցին դրան, այլ փախան այնտեղից, այնպես, որ մարդ իր ընկերոջ փախուստի մեջ չէր ճանաչում. և առանց մեկն ու մեկից հալածվելու գնացին բոլորը վախից դեպի ցած մղված՝ այնտեղ Գառնի քաղաքագյուղի գլխի ձորը լցվեցին։ Եվ երբ այդ բանը տեսան Սուլթանի զորքերը հետապնդելով՝ շատերին կոտորեցին և մյուսներին գահավեժ արեցին»)։

Ստեփանոս Օրբելյանը նույնպես նկարագրում է այս անցքերը ասելով, թե Ջալալեդդինը «եկեալ յԱյրարատեան գաւառ՝ բռնակ հարկանէր անգ. վասն որոյ ժողովեալ Իվանէ Աթաբէկին զամենայն զոյժ ե զօրութիւն Հայոց և Վրաց՝ կամէր մարտիւ պատահել նոցա»[3]։

---

1 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 224։

2 Նույն տեղում, էջ 224—225։

3 Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 399։ Տե՛ս նաև Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դարերի, հատ. 1-ին, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951, էջ 39։

(«Գալով Այրարատյան դավառը, բանակ է դնում այնտեղ, որի պատճառով Իվանե Աթաբեկը հավաքելով հայոց և վրաց ամբողջ ուժն ու զորությունը, կամեցավ ճակատամարտով գիմավորել նրանց»)։

Սաեփանոս Օրբելյանը պատմում է, որ Նալվեի գլխավորությամբ առաջապահ զորք է ուղարկվում թշնամու դեմ, սակայն, առաջապահների կոչը հիմնական զորքին, թե դուք ես եկեք, հասկացվում է իբրև փախուստի ազդարարում, որի հետևանքով և տեղի է ունենում Գառնո եղեռնը։

Այս անցքերի՝ այսինքն թշնամու դեմ առաջընթաց զորք ուղարկելու և Իվանեի զորքերի պարտության ու փախուստի մասին խոսվում է նաև XIV դարի վրաց անանուն հեղինակի ժամանակագրության մեջ, ըստ որում Գառնին անվանվում է գյուղ[1], որ ուրիշ ոչ մի աղբյուրում չի հանդիպում։

Վարդան Արևելցին պատմելով նույն անցքերի մասին, Գառնին անվանում է գյուղաքաղաք[2]։

XIII դարի հեղինակ Ստեփան եպիսկոպոսի տարեգրության մեջ նույն անցքերի առիթով Գառնին նույնպես անվանված է «քաղաքագյուղ»[3]։

Գառնիի ճակատամարտի և նրա աղետալի ելքի մասին մանրամասն պատմում է նաև Միխայել Ասորին, որն այդ կապակցությամբ Գառնին մի անգամ անվանում է գյուղաքաղաք[4], մի այլ անգամ, նույնիսկ քաղաք[5]։

Միխայել Ասորու պատմածի մեջ կա և ուշագրավ տեղեկություն այն մասին, թե Գառնիի բերդը և սարավույթը այդ ժամանակ·կանղուն էին։

«Եհաս համբաւ Խորազմին,—գրում է Միխայել Ասորին,—և նոքա փութով ժողովեալ զօրս կամէին ելանել ընդդէմ նոցա ի դաշտամէջն Գառնի քաղաքոյ, զոր շինեաց մեծ արքայն Հայոց Տրդատ, բերդ և սարաւոյթ՝ ի մեծամեծ վիմաց թագաւորութեան իւրոյ, որ գայ անիւաիտելի մինչև ցայսօր»[6]։

(«Հասավ Խորեզմի (Խորեզմշահի) համբավը և նրանք շտապով հավաքելով զորքերը կամեցան ելնել նրանց դեմ՝ Գառնի քաղաքի դաշտամիջում, որը Հայոց Տրդատ մեծ արքան իր թագավորության ժամանակ շինեց բերդ ու սարավույթ՝ մեծամեծ քարերից, որը անխորտակելի մնում է մինչև այսօր»)։

Միխայել Ասորին միակ հեղինակը չէ, որ Գառնին անվանում է քաղաք։ XIII դարի արաբ աշխարհագիր Յակուտը Գառնի (Ջուրնա) բառի տակ գրում է «Քաղաք Հայաստանի կողմերում, Դարիլի (Դվինի) մոտ»[7]։

Գառնին իբրև հայանի բնակավայր և գյուղաքաղաք XIII դարում հիշատակվում է նաև այն կապակցությամբ, որ ավել է գործիչներ, ինչպես կրոնական, նույնպես և հակաեկեղեցական-հակաֆեոդալական, գյուղացիական շարժումների բնագավառներում։

Կիրակոս Գանձակեցին պատմում է ոմն ճգնակյաց կրոնավոր Հովհաննեսի մասին, որն էր «ի քաղաքագիւղէն Գառնւոյ, ուր ղարմանալի սարաւոյթն է

---

1 Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. Բ հատոր, Երևան, 1936, էջ 52։

2 Վարդան, Հաւաքումն պատմութեան, Վենետիկ, 1862, էջ 143։

3 Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ., հատ. 1, էջ 39։

4 Միխայել Ասորի, ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1871, էջ 522։

5 Նույն տեղում, էջ 520։

6 Նույն տեղում։

7 Jacuts Geographisches Wörterbuch, Herausgegeben von Ferdinand Wüstenfeld, Leipzig, 1924, II, S. 65.

2—208

ՀՍՍՌ ՊՐՈՖՍՈՒՆԻՈՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Տրդատայ, ի սուրբ ուխտէն Այրիվանաց»[1]։ Այրիվանքի անձուկ կրոնական միջավայրում գաստիարակված, կուսակրոն գառնեցի Հովհաննեսին վերադրվում էին աեսիլներ ու հրաշապատում զրույցներ, որոնց նպաատակն է եղել փառաբանել հայերի գավանանքը և պայքարել մի կողմից՝ ընդդեմ հայերի գավանափոխության՝ հոռոմ (հունական) ֆոանգ կամ ասորի հավատի, մյուս կողմից՝ ընդդեմ կրոնական ղգացմունքների թուլացման՝ ընակչության մեջ. որը նկատելի էր այդ ժամանակներում։

Հովհաննես Գառնեցին հոգևորականության հետամնաց ուիրքերից պայքար է մղել նաև կրոնական ղոգմաներից և սուրբ գրքի աառից կատարվող շեղումների դեմ, իսկ նման շեղումներ նրա ժամանակ սովորական երևույթ էին։ Հայտնի է, որ X—XIII դարերում ֆեոդալների և եկեղեցու դեմ աշխաատավորների սուր պայքարի, լայն զանգվածների ինքնագիտակցության, քաղաքների զարգացման և հասարակական մտքի աշխարհականացման պայմաններում, հավատքը նկաատելիորեն թուլացել էր և քրիստոնեական գոգմաներն ու գաղափարները հանգիպում էին քննադաատական վերաբերմունքի ու ենթարկվում փոփոխության, դրանից գերծ չէին նաև եկեղեցական պաշտոնական դրականության բնագրերը։ Շեղումների և փոփոխությունների ենթարկվել էին նաև սաղմոսները։

«Զ Սաղմոս Դաւթի, մանաւանդ թէ զերգս հոգոյն սրրոյ, այլ եւ այլ աւելի և պակաս նուագեն մանկունք եկեղեցւոյ, ոչ ուսեալ զճշմարիտն. և այս եղեւ յանհոգութենէ ոմանց, և ի սղալաղիր գրչաց. իրահամարձակք ոմանք մաայօդ իմացմամբ աարագրեցին գուղիղն և զուղղորդն. նաև բաղում անգամ վիճին ոմանք ի նուագելն զՍաղմոսս, և այլ ոմանք ծայրաքաղ ստնելով բարբանջեն, անղեղջ սրաիւ և անիմաստ բայիւք... և Հայք՝ ի բերան առեալ՝ ասեն վայրապար, քահանայք և ռամիկք և մանկունք և կուլեռք և հաւատաւոր կանայք...»[2]։

(Դավթի Սաղմոսները, մանավանդ թե սուրբ հոգու երգերը, ավելի այլեայլ ձևերով և թերի են նվագում եկեղեցու աշակերտները (մանկունք) ճշմարիտը սովորած չլինելով. և այս եղավ ոմանց անհոգության և սխալագիր գրիչների պատճառով. հանդուգն ոմանք մաացածին կերպով (մաայօգ իմացութեամբ) փոխակերպեցին ուղիղն ու սաուլգը. Սաղմոսները երգելիս ոմանք նաև շատ անգամ վիճում են, ուրիշները կցկաուր կերպով քաղելով են բարբաջում, չգգջացող սրաով և անիմաստ բառերով... և հայերը բերանները առած՝ երգում են վայրարարո, քահանաները, ռամիկները, պատանիներն ու անչափահասները և կրոնավոր կանայք)։

Հովհաննես Գառնեցին գնալով Հաղբատ վանքը, գտնում է Հովհաննես Սարկաւագի ձեռքով արաագրված հին՝ թարգմանչաց ժամանակների սաղմոսների ընագիրը, սաուգում, վստահական է հայտարարում այն և տարածում է հայերի մեջ իրրև պաշտոնական բնագիր, որը նրա անունով կոչվում է «Գառնեցի»։ Հովհաննես Գառնեցին գրել է նաև աղոթքներ, որոնց մեջ քարոզում է կրոնական մոլեռանդություն։

Միանգամայն այլ նկարագիր ունի Սյունիքի Ջերմուկ բերդի մոտ Ծար գյուղում 1250 թ. ծագած հակաֆեոդալական գյուղացիական շարժման ղեկավար

---

1 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 335։

2 Ալիշան, Այրարատ, էջ 362։

Դավիթը, որը հանդես էր եկել նաև պաշտոնական եկեղեցու դեմ։ Ընկած լինելով հոգևորականության ճանկը և հանգիպելով գառնեցիների, Դավիթը դիմում է վերջիններիս օգնությանը։ «Քանզի տսէր զինքն ազգակից նոցա և ի Գառնուոյ». («Քանզի որ ասում էր, թե ինքը ազգակից է նրանց և Գառնեցի է)։

Այնելով օտար և ներքին կեղեքողների դեմ և պայքարի հանելով աղքատներին Դավիթը ժողովրդի առջև հայտարարում էր, թե «յԱրշակունեաց ազգէն եմ ես, և պարտ է որդոց իմոց լինել միոյն թագաւոր և միւսոյն՝ կաթողիկոս»[1]։ (Արշակունիների տոհմից եմ ես և իմ որդիները պիտի լինեն մեկը՝ թագավոր, մյուսը՝ կաթողիկոս)։

Դավթի ղեկավարած շարժումը մնաց տեղական նեղ սահմաններում և ճնշվեց չծավալվելով նույնիսկ մերձակա շրջաններում։

Մեջբերված վկայություններից երևում է, որ X—XIII դարերի աղբյուրների և հեղինակների մեծագույն մասը Գառնին անվանում է գյուղաքաղաք, միայն երկու օտար հեղինակ են այն քաղաք կոչում։ Իրականում իր բնակչության թվով, տնտեսությամբ, արհեստների և առևտրի զարգացման մակարդակով Գառնին փոքր քաղաքից չէր տարբերվում։ Տվյալներ կան նաև այն մասին, որ բերդերի ու ավանների, առավել ևս գյուղաքաղաքների բնակչությունը վայելում էր այնպիսի արտոնություններ, որոնք սահմանված էին քաղաքային բնակչության համար՝ «ըստ պայմանի քաղաքանացաց»։ Բայց քաղաք կոչվելու համար Գառնին պետք է ունենար մի այլ հատկանիշ ևս՝ այն պետք է պարսպապատ լիներ, ըստ որում պարսպի մեջ առնված պետք է լիներ ոչ միայն բերդը կամ միջնաբերդը, այլև ամբողջ գյուղաքաղաքը, մինչդեռ պարսպապատ էր միայն Գառնի ամրոցը, իսկ նրա առջև փռված գյուղաքաղաքը անպարիսպ էր։

Գյուղաքաղաքի իր նշանակությունը Գառնին պահպանում էր նաև XIV—XV դարերում։

1321 թ. մի արձանագրության մեջ, որը փորագրված է Գառնիի դիմաց գտնվող Հավուց թառի սբ. Կարապետ անունով մի երկարավուն մատուռաձև շենքի վրա հիշատակվում է ոմն «Կարապետ որդի Տիրատրոյ ի շահաստան ղղեկէս Գառնուոյ»[3]։ Այստեղ ուշադրավն այն է, որ Գառնին անվանվում է շահաստան ղղյակ, որ նշանակում է, թե այսաեղ զարգացած են եղել արհեստներն ու առևտուրը։

1346 թ. արտագրված մի ձեռագրի հիշատակարանում Գառնին դարձյալ անվանված է «գեղաքաղաք»[4]։ Իսկ 1423 թ. Պողոս Բ. Գառնեցի կաթողիկոսի օրոք Այրիվանքում սկսվել և Գառնի գյուղաքաղաքում ավարտվել է մի Մաշտոցի արտագրությունը «Եւ եղև գրչութիւն սորա ի նախաշրջական սուրբ ուխան՝ ի մեծն Այրիվանս, և կատարումն գրոցս՝ յաստուածապահ գիւղաքաղաքս Գառնի, առ դրան սուրբ և հրաշափառ Կաթողիկէիս և այլ սուրբ եկեղեցեացս ի թվ. ՊՀԲ (1423)»[5]։

---

1 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 327—328։

2 Այս առթիվ տե՛ս մեր աշխատությունը «Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դարերում», էջ 64—67։ Կիրակոս Գանձակեցի. Պատմութիւն, էջ 335։

3 Գ. Հովսեփյան, Հավուց թառի Ամենափրկիչը, էջ 16։

4 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանները, էջ 351։

5 ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին, էջ 303—304։

(«Եվ գրվեց սա նախապատվելի սուրբ ուխտի մեջ՝ մեծ Այրիվանքում, իսկ ավարտվեց այս դիրքը աստվածապահ Գառնի գյուղաքաղաքում՝ այս սուրբ հրաշափառ կաթողիկէի և մյուս սուրբ եկեղեցիների ղոտնը ՊՀԲ (1423 թվականին»)։

Այսպիսով, Գառնին XV դարում ևս անվանվում է գյուղաքաղաք և նշվում է, թե այստեղ կլ կային մի քանի եկեղեցիներ, որոնց ավերտկներն ու մնացորդները իրոք պահպանվում են գյուղի տարբեր մասերում։ Այստեղից են դուրս եկել մի շարք խոշոր եկեղեցական գործիչներ, դրանց թվում և երեք կաթողիկոս։

Մոնղոլական աղետալի տիրապետությունը իր բացասական հետևանքներն ունեցավ ողջ երկրի անտեսական, քաղաքական և կուլտուրական զարգացման վրա։ Քայքայվեց ոռոգելի երկրագործությունը, տնկում ապրեցին քաղաքները, որոնցից մի քանիսը ամայացան, իսկ մյուսները հաղիվ պահպանում էին իրենց գոյությունը, շատերն էլ ավանների, գյուղերի վերածվեցին։ Եվ եթե Գառնին այս պայմաններում շարունակում էր մնալ իբրև գյուղաքաղաք, ապա դա բացատրվում է մասամբ այն բանով, որ Դվինի կործանումից հետո այդ երբեմնի խոշոր քաղաքի արհեստավորների մի մասը փոխադրվեց Գառնի։ Մեր այս ենթադրությանը հիմք է ծառայում ոչ միայն այս երկու կետերի մերձավորությունը, այլև Դվինի խեցեղենի անոթների արտադրությունը Գառնիում՝ Դվինի անկումից հետո, որը երևում է այդ տիպի, բայց XIII դարի երկրորդ կեսին և XIV դարի սկզբներին պատկանող խեցեղենի գգալի թվով բեկորների հայտնաբերումից։

XIV—XV դարերում Գառնին քանիցս ենթարկվում է ասպատակություններ և նույնպես անկում է ապրում։ Բայց ինչպես երևում է XV դարում Գառնիում հաստատված է եղել ինչ որ իշխանավոր, որը և թերևս արաբերեն մակագրությամբ դրամներ է հատել և շքաղյուսներով զարդարված շենք է կառուցել իր համար։

Թե ովքե՞ր են տիրել Գառնիին և նրա մերձակայքին, մասամբ պարզվում է մեզ հասած որոշ տեղեկությունների շնորհիվ։ Սիմեոն կաթողիկոս Երևանցին «Ջամբռ» նշանավոր աշխատության մեջ խոսելով Հավուց թառի Ամենափրկիչ վանքի և նրան ենթակա բնակավայրերի ու տերությունների մասին, իրավացի նկատում է, թե վանքի և նրա կալվածների աերերը շարունակում էին մնալ Գրիգոր Մագիստրոս Պահլավունու տոհմի ներկայացուցիչները։ XV դարում Գառնի գավառին տիրացել էին ոմն «տաճիկ» Հեյդարի հետնորդները, որոնք զավթել էին նաև Հավուքթառի վանքի աիրույթները։ 1487 թ. վանքի առաջնորդ Պահլավունի տոհմից ծագող Զաքարիա վարդապետը որոշ գումար վճարելով Գառնո գավառի տեր՝ Հեյդարի թոռ Ամիրքյամալ Արդինբեկին ետ է գնում վանքին պատկանող 9 գյուղերը, որոնցից 6-ը վանքին պետք է վճարեին բոլոր տեսակի հարկերը՝ ամբողջությամբ (վեց դանկ), իսկ Կոխզը (այժմ Գողթ)՝ հարկերի կեսը (երեք դանկ)։ Այդ առթիվ Սիմեոն Երևանցին գրում է.

«Ի յաղդէ վերոյ գրեալ Գրիգոր Մագիսարոսին՝ մի զկնի միոյ յաջորդելով՝ նստի առաջնորդ ի վանքս այս ի նոյն գեղջէն Հայոցթառու Զաքարիա վարդապետն... Արդ այս Զաքարիա վարդապետս ցանց դանդ մուլքս այսոցիկ. այս ինքն, Մանկուա, Աւանիկ, Կուտիս, Հայոցթառ, Կուտուց վանք, Աւանասար, Թառնիս, և սուրբ Սարգիս կոչեցելոց գեղջոցէիցս. և Կոխզտ երեք դանք մուլքն, որք են ինն գեղք, ի տաճկէ միոջէ, որ կոչի Ամիրքեամալ Արդինբէկ,

որդի Նաւրուզի որդու Հէյդարի՝ հինգ հազար դենարի, ի ՊՂԴ թուին տաճկաց և ի ՋԼԶ թուոջն մերում, զորոյ զզապալայն գացես ցուցակաւն...։ Յորում դրին իւրաքանչիւրքն յատուկ յատուկ սահմանօքն իւրեանց, որք են ի Գառնուոյ նահանգոջն»[1]։

(«Վերոհիշյալ Գրիգոր Մագիստրոսի տոհմից՝ սեկը մյուսից հետո հաջորդելով՝ առաջնորդ է նշանում այս վանքում նույն Հայոցթաո գյուղից Զաքարիա վարդապետը... Արդ՝ այս Զաքարիա վարդապետը սրանց, այսինքն Մանկուս, Ավանիկ, Կուտիս, Հայոցթաո, Կուտուց վանք, Ավանասար, Թառնիս, ե սուրբ Սարգիս գյուղերի վեց դանկ մուլքը և Կոխդի երեք դանկ մուլքը, որոնք են ինը գյուղ (դնեց) մի տաճիկից, որը կոչվում է Ամիրքյամալ Արդին բեկ, որդի Նավրուզի որդու Հեյդարի՝ հինգ հազար դինարով, աաճկաց ՊՂԴ (894) թվին ե մեր ՋԼԶ (936)=1487 թվականին, որի կալվածագիրը կգտնես ցուցակում... Որի մեջ գրված են յուրաքանչյուրը առանձին-առանձին իրենց սահմաններով, որոնք գտնվում են Գառնո գաւառում»)։

Վանքի համար ձեռք բերված գյուղերը Զաքարիան կապալազրով ձեռակերպում է իր անվամբ, քանի որ վանքը իր կալվածներով նույնպես հանդիսանում էր Մագիսարոսի տոհմի ժառանգական սեփականություն, թեե այս իշխանական տան շառավիղները արդեն հանդես էին գալիս հոգևորականի սքեմով։

«Արդ՝ Զաքարիա վարզապեաս զայսոսիկ ի յառնուլն, յիւր անունն առնու, և զանուն Ամենափրկչին ոչինչ յիշէ ի զապալայոջն, և զվախմ անուն ինչ ո՛չ գրեցուցանէ. որոյ պաաճառն է՝ զի սոքա ի ընէ անաի ազատազունք էին և անուանիք, շաաազդ և հարուսաք, յորոց թէպէա ոմանք վանականք լինէին, ոմանք աշխարհականք, սակայն մի էին տամրք ե ընչիւք, ե իւրեանց էր համարեցեալ դեօզն ե վանքն առանց խտրութեան։ Վասն որոյ և ինքն մինչ առաջնորդ իսկ էր սոյն վանքիս, որպէս թէ վասն վանքիս առնոյր զայսքան մուլքս, թէպէա յանուն վանքին վախմ ոչ գրեցուցանէր ի միամտութենէն»[2]։

(Արդ՝ այս Զաքարիա վարդապետը սրանք գնելիս, իր անվամբ է գնում և Ամենափրկչի անունը կալվածագրերի մեջ բոլորովին չի հիշատակում, և վախմ (եկեղեցական կալված) անունով չի գրանցում, որի պատճառն է՝ որ սրանք ի ընե ազատազուն էին ու անվանի, բազմազդ և հարուստ, որոնցից մի քանիսը թեպետ վանական էին դառնում, մյուսները՝ աշխարհական, սակայն տոհմով և ունեցվածքով մեկ էին, և իրենցն էր համարվում գյուղն ու վանքը՝ առանց խտրության։ Որի պատճառով, քանի որ հենց ինքն էլ վանքի առաջնորդն էր, որպես թե վանքի համար գնեց այնքան մուլքերը, թեև վանքի անունով վախմ չգրանցեց՝ ստրակուսանք չունենալով)։

Այստեղ մենք ունենք մի ցայտուն օրինակ, թե ինչպես հոգևորականի սքեմ զգեցած ֆեոդալները XV դարում կարողանում էին պահպանել իրենց տիրույթները, նորից և նորից իրենց վրա հաստատել տալով դրանք[3]։ Տվյալ

---

1 Սիմեոն Երեւանցի, Ջամրռ, էջ 277։ Գառնո «նահանգը» ընդարձակ էր և նրա մեջ մտնում էր նաև Արտաշատի շրջանը։ Տե՛ս նույն տեղում, էջ 280։

2 Նույն տեղում, էջ 277։

3 Այս կալվածագիրը Շահ Իսմայիլ Բ-ի օրոք 1577 թ. վերահաստատվել է «Բաբայի որդիներ Զաքարիա վարդապետի և Միր Թոմանի (?), Խոջայի որդի Ջիգլասի և Թունիի որդի Մեհրարի» անունով նշվելով, որ այդ բոլոր գյուղերը հրշյալ անձնավորությունների օրինական ժառանգի մուլքերն են։ Տե՛ս Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, 1-ին. Հրովարտակներ. պրակ առաջին (ԺԵ—ԺԶ դդ.), Երեւան, 1956, էջ 67—68։

դեպքում, ստկայն, մեզ հետաքրքրողը այդ հարցը չէ, այլ այն, որ Գառնո գավառին XV դարում տիրում էր Ամիրբյամալ Արդին բեկը (դուցե և նրանից առաջ նրա հայրն ու պապը), որի իշխանությունը բավականաչափ ընդարձակ էր (Օշականն էլ և նա ուրիշին վաճառել)։ Ելնելով այս ամենից, կարելի է ենթադրել, թե այս Աբդին բեկը կամ սրա մերձավորները հաստատված են եղել Գառնի ամրոցում, ուր թերևս նրանց են պատկանել այնպիսի շինքեր, որոնց արտաքին հարդարման համար օգտագործվել են հախճապակյա շքաղյուսներ, որոնց նմուշները հայտնաբերվել են ամրոցի պեղումների ժամանակ։

Հայ ժողովրդի վիճակն ավելի ծանրացավ XVI դարում, մինչև XVII դարի 30-ական թվականները. երկիրը դարձել էր անընդհատ պատերազմների և ասպատակությունների ասպարեզ։ Օտար տիրապետողների ծանր լծի տակ հեծող ժողովուրդը ենթարկվում էր անասելի կամայականությունների, հալածանքների, ասպատակության, կողոպուտի և գերեվարության։ Նրա գրագետ զավակներին մնում էր հիշել, որ միշտ այդպես չի եղել, որ հայերն էլ ունեցել են իրենց պետականությունը, շեն երկիրը, համեմատարար խաղաղ կյանք և երաշխիք, որպեսզի կրկին այդ դրությունը ստեղծվի։ Այս գաղափարներով է տոգորված Սիմեոն Ապարանցու ողբը, որը նվիրված է Տրդատ թագավորի թախտին, և որի մեջ նկարագրվում է «երկաթաղամ կապարակտպ» հեթանոսական տաճարը, որն այն ժամանակ (1593) դեռևս կանգուն էր, պահպանված լինելով իբրև պալատ կամ «ամարանոց, հովանոց»[1]։

Գրիգոր Դարանաղցին խոսելով Սիմեոն Ապարանցու մասին ասում է. «Եւ էր յաշակերտացն հետևակ Ներսէսին և էր բանիբուն և իմաստասէր և բանաստեղծ և աաղասաց, որ զմեծին Տրդատայ զարմանալի սարաւոյթն, այսինքն դպաղատն, սր է ի գիւղաքաղաքին Գառնի, նա զեղեցկայարմար յոճով յոյժ վայելչապէս զոչասանական երգով ողբերգախառն գրուատեաւ է։ Որպէս մեք այլ արժանացաք սուրբ տեղոյն տեսութեան, որ Մաշտոց վարդապետին և մեծ վարդապետին Գէորգայ գերեզմանատուն եկեղեցին կից և հուպ է սարաւոյթին»[2]։

(«Եվ (սա) Ներսեսի աշակերտներից ու հետևորդներից էր և բանիբուն փիլիսոփա, բանաստեղծ և տաղասաց, որ Տրդատ Մեծի զարմանալի սարավոյթը, այսինքն պալատը, որը Գառնի գյուղաքաղաքում է. նա գեղեցկատարմալ ոճով շատ վայելուչ կերպով ողբերգախառն զոչասանական երգով գրվատել է։ Ինչպես և մենք արժանացանք այդ սուրբ տեղերը տեսությանը, որ Մաշտոց վարդապետի և Գեորգ մեծ վարդապետի գերեզմանատուն եկեղեցին կից և կպած է սարավոյթին»)։

XVI դարի սկզբներին Այրարատյան նահանգը, մասնավորապես Կարբին, Օշականը ենթարկվում են Ջալալի փաշայի (որին անվանում էին Թոփալ Օսման փաշա) ասպատակություններ։ Ասպատակները ծանր հարվածներ զուգակցում էին կապուտ-կողոպուտի հետ։ Հիշյալ վայրերի բնակչությունը մասամբ փախչում է դեպի Գառնի։ Այստեղ գյուղի մոտի քարայրում հավաքվում է 500-ից ավելի մարդ։ Ասպատակելով Գառնին ջալալիները ծուխ դնելով քարայրի առջև ծխահեղձ են անում քարայրում ապաստանածներին։ Մի գյուղացի թշվառներին փրկելու համար, կաաարում է անձնազոհ արարք՝ բնակչության անասունների աեղը ջալալներին ցույց տալու պատրվա-

1 Ա լ ի շ ա ն, Այրարատ, էջ 368—369։

2 Գ ր ի գ ո ր Կ ա մ ա խ ե ց ի (Դարանաղցի), էջ 376։

կով նրանց տանում է Քոռադարա կոչվող ձորը, որից օգտվելով պտշարված բնակչության պաշտպանները այրից հանելով ծխահեղձներին և ձյունով տրորելով ու ջրով շփելով շատերին փրկում են մահից[1]։

Գրիգոր Դարանաղցին, ինչպես երևում է Գառնին գյուղաքաղաք է անվանում ավանդաբար, քանի որ այդ ժամանակներում քանիցս ասպատակությունների դոհ դարձած Գառնին արդեն վերածվել էր գյուղի, որպես և անվանում է նրան Առաքել Դավրիժեցիս XVII դարի սկզբի անցքերի կապակցությամբ։ Պատմելով Շահ Աբբաս Ա-ի հրամանով մի քանի նահանգների շուրջ 300 հազար հայ բնակչությունը իր դարավոր շեն բնակավայրերից տեղահան անելու և դեպի Իրան դաղթեցնելու աղետալից անցքերի մասին՝ Դավրիժեցին ասում է, թե Շահ Աբբասը Ամիրգունա խանի գլխավորությամբ զորքեր ուղարկեց գաղթեցնելու նաև Գառնո դավառի բնակչությանը։ Զորքերը մտնելով «ի գիւղն Գառնի, և ոչ ըստ հրամանաց թագաւորին առնէին, այլ որպէս դդերևվարս և աւարառուս սկսան յափշտակել գինչս և զգաւակս քրիստոնէից։ Եւ զայն տեսեալ բնակչաց գեղջն ձայն տուեալ միմեանց՝ և արարեալ ամրոին մեծ, սրով և բրով, քարիւ և փայտիւ հարեալ վիրաւորեալ կառափնատեցին զնոսա՝ և ի բաց վարեցին յինքեանց»[2]։

(Պարսիկները մտնելով «Գառնի գյուղը ոչ թե ըստ թագավորի հրամանի էին գործում, այլ որպես դերեվարներ և ավարառուներ, սկսեցին հափշտակել քրիստոնյաների ունեցվածքն ու զավակներին։ Սա տեսնելով այդ գյուղի բնակիչները՝ իրար ձեն տալով և մեծ ամրոխ կազմելով սրով ու բրով, քարով ու փայտով հարվածելով, վիրավորելով գլխատեցին նրանց և հեռու քշեցին իրենցից»)։

Փախուստի մատնված թշնամու զորքերը դիմում են Ամիրգունա խանին, «որոյ սրամտեալ բարկութեամբ մեծաւ, առեալ ընդ իւր զօրս յոլովս եկն ի դաւառն Գառնւոյ, և նախ զնոյն Գառնւոյ գեղջ զարսն ըմբռնեալ էարկ ի խոշտանդանս չարչարանաց հարմամբ դանից, և հատմամբ յօդից, և իսկոյն չուեցուցեալ եա ի ձեռս զօրականաց իւրոց առնել իառնել զնոսա ի չուս ժողովրդոցն ի մեծ բանակն։ Զոր և տարեալ խառնեցին ի չուս ժողովրդեանն, որք ընդ նոսին գնացին յաշխարհն Պարսից»[3]։

(«Որը զայրացած մեծ բարկությամբ, վերցնելով իր հետ շատ զորք եկավ Գառնի գավառը և ամենից առաջ նույն Գառնի գյուղի տղամարդկանց բռնելով՝ խոշտանգումների ու չարչարանքների ենթարկեց՝ գանահարությամբ և հոդերը կտրելով և իսկույն դաղթեցնելով ավեց իր զորականների ձեռքը, որ նրանց տանեն խառնեն ժողովուրդների դաղթին, (իրենց) մեծ բանակում։ Որոնց առնելով խառնեցին ժողովրդի դաղթին, որոնք նրանց (մյուսների) հետ միասին գնացին պարսից աշխարհը»)։

Դավրիժեցին պատմում է, թե հազարավոր մարդիկ Գառնիից և շրջակա գյուղերից ապաստան են դտնում ձորերում ու քարայրներում, մասնավորապես Քոռադարա մեծ ձորի Եսիրշիան կոչվող այրում։ Զինված աղամարդիկ մարտի են բռնվում պարսիկների հետ, սակայն թշնամու գերազանց ուժերը բարձրանում են սարը և 300-ական խմբերով գոտի առ գոտի իջնելով հասնում են քարայրի դռտուն, ապա չորս մարդու, ոտից գլուխ երկաթե զրահներ

1 Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, էջ 81—83։
2 Նույն տեղում, էջ 47։
3 Նույն տեղում։

հաղցնելով թոկերով իջեցնում են քարայրը։ Երբ քարայրի պահապանները շտապում են վանքը կանխելու, թշնամին հետապնդելով նրանց խուժում է քարայրը, ուր սկսվում է սոսկալի կոտորած։ Պարսիկները չեն խնայում նույնիսկ կանանց և երեխաներին։ Երիտասարդ տղաներն ու աղջիկները փակելով իրենց աչքերը, բարձր քարայրից իրենց անդունդն են նետում՝ դերադասելով մահը անպատվությունից և գերությունից։ Շատ շատերը զոհ են գնում պարսից զորքերի անողոք և վայրագ սրին, մնացածներին պարսիկները գերի են վարում։ Պատմիչը դառնագին ոգբում է այս չար աղետը և մխիթարության եզերք չի տեսնում[1]։

Այս դեպքերը նկարագրված են նաև XVII դարի մի անանուն ժամանակագրության մեջ։

«Դարձեալ պատմեմ ձեզ և այլ բան աղէտի և ողբերգութեան ի յամուր լերինք Գառնոյ և Այրիվանաց և Վանաստանայ բազում ժողովուրդ զօրեալ և թաքուցեալ էր՝ սրոյ դեռ ի միում բարձրարնակ այրի ամրացեալ յապահով և անհոգ նստէր մասն ինչ ի ժողովրդենէն. յանկարծ տեսին, որ անօրէն զօրքն Պարսից սուսերամերկ ի մէջ նոցա թափեցան. և սկսան զպարսկական սուրն ի գործ ածել, իսկ քրիստոնէիցն ի յահէ սրոյն կամաւ զինքեանս ի վայր արկին յանհուն բարձրութիւնէն՝ արք և կանայք, ծերք և տղայք։ Յայնժամ մի ոմն ի միջի նոցա երաժիշտ և քաջ փողահար ազաչեաց զղինուորքն դադարել ի կոտորելոյն և ինքն եդեալ ի բերան բզզուոնտն ողորմ ձայնիւ երգեաց զդամբանական և զգերեզմանական ողբն ի վերայ նոր մեռելոցն, որ ի յաստակ քարանձաւին, ոմանք մեռեալք և ոմանք ի յելս հոգոյն ի յարեան ճապաղիս թաւալեալք ջուր խնդրէին և ոչ ոք էր, որ արբուցանէր նոցա...»[2]։

(«Դարձյալ պատմեմ ձեզ աղեաի և ողբերգության մի այլ բան՝ Գառնո, Այրիվանքի և Վանասատանի ամուր լեռներում փախել թաքնվել էր բազում ժողովուրդ, մինչդեռ ժողովրդի մի մասը մի բարձրադիր այրի մեջ ամրանալով ապահով և անհոգ նստած էր, հանկարծ տեսան, որ պարսից անօրեն զորքը սուսերամերկ թափվեց նրանց մեջ և սկսեց պարսկական սուրը գործի դնել, իսկ քրիստոնյաները սրի ահից կամովին իրենց վայր նետեցին անհուն բարձրությունից՝ տղամարդիկ և կանայք, ծերեր ու երեխաներ։ Այն ժամանակ նրանց մեջ մեկը՝ երաժիշտ և քաջ փողհար աղաչեց զինվորներին դադարել կոտորելուց և ինքը զուռնան բերանին դնելով ազիզորմ ձայնով երգեց (նվագեց) դամբանական և գերեզմանական ողբը նոր մեռելների վրա, որ քարանձավի հատակին էին. ոմանք մեռած, ոմանք հոգին տալու վրա հոսող արյան մեջ թավալված ջուր էին խնդրում և ոչ ոք չկար որ ջուր տար նրանց...»)։

Եղեռնը հաջորդում էր եղեռնին, մինչև Գառնին կործանվեց և ամայացավ։ 1630-ական թվականներին կրկին տեղի էին ունենում պատերազմական լայնածավալ գործողություններ Իրանի և Թուրքիայի միջև։ 1636 թ. Սուլթան Մուրադը դրավել էր Բազդադը և շարժում էր իր զորքերը դեպի արևելք։ Հայաստանը կրկին հանդիսանում էր պատերազմի թատերաբեմ և ռանակոխ էր արվում, ավերվում ու սոսոսատսուս. հայ բնակչությունը կոտորվում էր, գերի տարվում։ Պատերազմում թուրքերին օգնում էին Ղրիմի թաթարական խանի ուղարկած զորադնդերը, որոնց իրավունք էր վերապահված կողոպուտի հա-

---

1 Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, էջ 49—52։

2 Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ., հատ. 1, էջ 184։

մար բաժին ստանալ այս կոս այն գավառը։ 1638 թ., երբ Օսմանյան գոր-
բևերը իրենց մեջ բաժանեցին գեռես չկողոպտված գավառները, Գառնին իր
մերձակա գյուղերով բաժին ընկավ թաթարական գնդերին և ենթարկվեց վայ-
րագ կոտորածի ու կողոպուտի։

Գրիգոր Դարանալցին պատմում է. «Եւ ի Գառնոյ ի վայր զմօտահաս
դեղօրէքն ի վերի՝ վարեցին և յաւարի առին զորսս գտին՝ թէ հայ, թէ տաճիկ.
ղերկիրն և ղանասուն այլ, և լցին զգաշտն վայիւ և աղաչակաւ և անասնոց
բառաչմամբ»[1]։

(«Եվ սկսած Գառնիից գեպի ցած մոտակա գյուղերով գերի վարեցին և
ավարի ենթարկեցին, ում որ գտան՝ թե հայ, թե տաճիկ, նաև երկիրը և անա-
սունները, այլե լցրեցին գաշտը լացով ու աղաչանքով և անասունների բառա-
չով»)։

Ով փրկվել էր պարսից զորքերի կոտորածից և գերեվարությունից գնահ է
դառնում թաթարների սրին. բնակչության մի մասն էլ գերի է տարվում։

Գառնին կողոպտվում, հիմնահատակ ավերվում ու ամայանում է։

1638 թ. ավերածությունից հետո Գառնին իրրև շեն բնակավայր այլևս
չի հիշատակվում։ Ճիշտ է Մատենագարանի № 1858 (1827 ձեռագրում), որի
հեղինակն է Սիմեոն Երևանցին ՌՃ (1659) թվականի տակ հիշատակվում է
թե Գառնո եպիսկոպոսն էր Ջուղայեցի Սիմեոն վարդապետը, որին հեղինակը
անվանում է գերիմաստ գիտնական, քերական՝ պատմարան[2]։ Իսկ Արրահամ
Կրետացին XVIII դարի երեսնական թվականներին հիշատակում է Գառնո,
Մաղկաձորոյ, Գեղարքունոյ, Ապարանու և Շիրակավանոյ մելիքներին։ Սակայն
ընագրից երևում է, որ խոսքը վերաբերում է Գառնո գավառին[3]։ Ինչպես երե-
վում է Գառնիում պահպանվում էին եկեղեցիներ, և կային եկեղեցականներ,
քանի որ Արրահամ Կրետացին այցելելով մի շարք եկեղեցիներ 1734 թ. եր-
կուակտն օր գիշերել է Հավուց թառում և Այրիվանքում և մի օր էլ Գառնիում[4]։

1638 թ. հետո XVII—XVIII դարերում առհասարակ հիշատակվում է
Գառնո գավառ, իսկ օտարերկրյա ճանապարհորդները XVIII դարում և XIX
դարի սկզբներին այցելելով Գառնի, հիշատակում են միայն նրա հին հուշար-
ձանները։ Նրանցից Կեր Պորտերը, ինչպես կտեսնենք, նշում է նաև գյուղի
ավերակ և ամայի լինելը։

Գառնիի հռչակավոր հեթանոսական տաճարը կանգուն էր մինչև 1679 թ.
և կործանվեց ուժեղ երկրաշարժից նույն թվականի հունիսի 4-ին։

Զաքարիա Քանաքեռցին այդ առթիվ գրում է.

«Ի թուին ՌՃԻԸ ի յունիս ամսոյ Դ... յանկարծակի գոռաց երկիր որպէս
ամպքն. ետ գոռալոյն ահագին թնդմամբ շարժեցաւ. երկիրն Արարատեան
առհասարակ դողայր և երերիւր... և եկեալ շարժս այս ի կոգմանց Գառնւոյ՝
և փլան ամենայն շինուածք և գեղեցկայարկ բնակութիւնք, և վանորայք, և
եկեղեցիք։ Այսոքիկ են աւերեալ եկեղեցիք, Աղշոց-վանք, Այրի-վանք, Հաւուց-
թառ, Տրգակերտն (Տրգաաակերտն), Խորվիրապն, Ջրվեղ, Զագավանք, երեք

---

1 Ժամանակագրութիւն Գրիգորի վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղեցւոյ, էջ 579։
2 Գ. Հովսեփյան, Հավուց թառի Ամենափրկիչը, էջ 82, ծան. 1։
3 Արրահամ Կրետացի, էջ 62։
4 Նույն տեղում, էջ 6։

եկեղեցիք յԵրևան, Նորադաւիթ, Նորադեղ, Զորադեղ, Նորք, Գամրէղ և բերդն Երևանայ ի հիմանց տապալեցաւ, մդկիթ և մինարայք...»[1]։

(«ՌՃԻԸ (1679) թվականի հունիս ամսի 4-ին... երկիրը հանկարծակի դողաց ինչպես ամաերը. դողալուց հետո ահագին թնդյունով շարժվեց. ամբողջ Արարատյան երկիրը դողում էր և ելերում... և այս երկրաշարժը եկավ Գառնո կողմերից, և փլվեցին բոլոր շինվածքները և դեղեցկահարկ ընակարանները և վանքերն ու եկեղեցիները։ Սրանք են ավերված եկեղեցիները՝ Աղչոց-վանք, Այրի-վանք, Հովուց-թառ, Տրդակերտը (Տրդատակերաը), Խորվիրապը, Ջրվեղ, Զագավանք, երեք եկեղեցի Երևանում, Նորադավիթ, Նորադեղ, Զորադեղ, Նորք, Գամրեղ և Երևանի բերդը հիմնիվեր կործանվեց (նաև) մզկիթ և մինարեներ»)։

Ավերվում է նաև Քանաքեռը, որտեղ, պատմիչի ասելով, 1228 մարդ զոհվեց. մեծ վնասներ եղան Կարրի գյուղաքաղաքում, վնասվեց Հովհաննավանքը, ավերածություններ և զոհեր եղան շատ այլ գյուղերում[2]։

Պատմիչի հիշատակած Տրդատակերտը կամ Տրդատաթախտը Գառնիի հեթանոսական տաճարն է, ինչպես նա կոչված է մյուս պատմիչների մոտ ևս։ XVIII դարի մի անանուն ժամանակագրությունից այդ բանը երևում է ավելի քան որոշակի։ Խոսելով նույն երկրաշարժի մասին, անանուն հեղինակը գրում է. «Սաստիկ շարժ եղև յԵրևան և ՃՌ (8000) մարդ մեռան և Հաւուց թառու եկեղեցիքն և Գեղարդին և Գետարդելին փլան և Տրդատայ թախտն ի Գառնի ի հիմէ կործանեցաւ և այլ բազում եկեղ[ե]ցիք և ապարանք յատակեցան»[3]։

(«Սաստիկ երկրաշարժ եղավ Երևանում և 8000 մարդ մեռավ, և Հավուց-թառի և Գեղարդի և Գետարդելի եկեղեցիները փլվեցին և Տրդատաթախտը Գառնիում հիմքից կործանվեց, և այլ բազմաթիվ եկեղեցիներ ու ապարանքներ գետնին հավասարվեցին»)։

Եվրոպական ճանապարհորդներից Գառնի են այցելել Տելֆերը, Ջեյմս Մորիերը, Կեր Պորտերը և Դյուրուան։

Գառնի տաճարի մասին խոսում է և Շարդենը, որը չի եղել Գառնիում և տալիս է թյուր տեղեկություններ իր լսածների հիման վրա։

Տելֆերը (Buchan Telfer) եղել է Գառնիում, նա լսել է, որ հեթանոսական տաճարը կործանվել էր երկրաշարժի հետևանքով։ Գառնիում գտել է վրացական որամներ և տեսել է մի պղնձյա անոթ «Միրզաիանի որդի Պետրոս ՈՄԻԱ» (1772) մակագրությամբ»[4]։

Ջեյմս Մորիերը այցելել է Գառնի 1812 թ. օգոստոսին։ Նա գրում է, թե Գառնիում «տեսնվում են մի բերդի ավերակներ, բաղկացած մի դռնից և երկար տարածությամբ պարիսպներից»։ Նա տեսել է Գառնիի հոնիական ոճի տաճարը, որը «ունենալով հռոմեական վարպետության բոլոր նշանները, բոլորովին օտար է պարսկական կամ հայկական որևէ բանից»[5]։ «Բերդի դուռն ու պարիսպները նմանապես իրենց ծագումով պատկանում են ավելի մեծ հնության, քան ընդհանրապես հայկական ավերակներն են, և դատելով իրենց

---

1 Զ ա ք ա ր ի ա Սարկավագի Պատմութիւն, Վաղարշապատ, հատ. երկրորդ, 1870, էջ 104։

2 Նույն տեղում, էջ 104—105։

3 Մատեն ժամանակագրություններ, XIII—XVIII դդ., հատ. 1-ին, Երևան, 1951, էջ 327։

4 Telfer Buchan, The Crimea and Transcaucasia, vol. I, 1876, էջ 220—222։

5 Հ ո վ հ. Հ ա կ ո բ յ ա ն, Ուղեգրություններ, հատ. Զ. Երևան, 1934, էջ 346։

որմնադրության տոկունությունից, չափից, հարմարությունից, և զանգվածի լավ վարպետությունից, նրանք փասարեն ժամանակակից են հոնիական շենքերին»[1]։

Ավելի ուշագրավ են Կեր Պորտերի վկայությունները։ Նա 1819 թ. հոկտեմբերի 26-ին ժամանելով Գառնի գրում է, թե այստեղ «պարիսպներ ու աշտարակներ են կառուցված, կազմված ծայրի հսկա կտորներից, դեղեցկորեն տաշված ու միացված հռոմվեական բանվորների վարպետությամբ, որոնք, ասում են, թե եղել են ճարտարապետները։ Նրա (բերդի) պաշտպանության հյուսիսային կիծը բաղկանում է կիսաշրջանակ պարսպի ու աշտարակների մի շղթայով, որ մրանում է արևելյան ու արևմտյան զառիվայրերին։ Միայն մի գոտի հետքն է տեսնվում ե հավանորեն ուրիշ գուռ չի եղել. և դա շատ հեռու չէ երկրորդ կամ արևելյան աշտարակից։ Պարիսպներից ներս զետեղված է արքայական պալատը, որի ավերակներից սակավին շատ բան է տեսնվում, բաղմաթիվ ավելի խոնարհ շենքերի կույտերի միջում»[2]։

Խոսելով պալատի, կամ ինչպես ճիշտ նկատել է տաճարի մասին Կեր Պորտերը ասում է, թե «նրա մոտ կան քարե հիմքի բավականին զանգվածներ, որ սարածվում են դեպի հյուսիս և արևմուտք, բայց նրանց մեջ զարդարուն բեկորներ չեն տեսնվում։ Ամենից ուշագրավը հայոց թագավորի պալատի մասն է»[3]։

Կեր Պորտերը շարունակում է. «Դեպի հյուսիս, փլփլած պարիսպների սոտ տակավին նկատելի են հարձակման հին գործիքների տարօրինակ մնացորդները, այսինքն քարե կոպիտ գնդակներ, որոնք մեր ամենամեծ ռումբերի տրամագծից ավելի խոշոր են...»[4]։ «Հյուսիսային պատից այն կողմ, դեպի լեռան հարթությունը երևում են խոր, հետաքրքրության արժանի ավերակներ, մի քաղաքի մնացորդներ, որ երկրի ժողովուրդը անվանում է Գառնի։ Այս հնավանդ ավերակները երկարում են մեծ տարածությամբ, ցուցադրելով երկար ու այլազան շարք տների հիմքերը և հինգ եկեղեցիների ավելի աչքառու ավերակները, որոնց կառուցման ոճը պատկանում է սարբեր շրջանի, քան բերդին։ Այս սրբազան շենքերի ճարտարապետությունը ճիշտ նման է էջմիածնի վանքին, որից երևում է, թե ժայռի վրայի սյունազարդ շենքից մի դար հետո է կառուցվել։ Պաշտպանողական պտրիսպները և աշտարակները, որոնք հավանական է, որ լինեն քաղաքի սահմանները, հազար յարդա են։ Անցյալ փառքի այս մնացորդների կամարների տակ ապաստան են գտել մոտ ինը-տասը լիուական ոչ նստակյաց ընտանիք, որոնք իրենց և իրենց կենդանիների հարմարություն ստեղծելու համար, ադարաել են հին ճարտարապետության հոյակապ երևույթը»[5]։

Այս վկայության մեջ հիշատակվող հինգ եկեղեցիների մնացորդները պահպանվել են մինչև մեր օրերը։ Կարևոր է և այն, որ Կեր Պորտերի վկայությունից երևում է, թե Գառնին ամայի է եղել, բնակչությունից զուրկ և ժամանակավորապես միայն մի քանի քոչվոր ընտանիքներ են այնտեղ բնակված եղել։

---

1 Հովհ. Հակոբյան, Ուղեղրություններ, հատ. Զ. Երևան, 1934, էջ 347։
2 Նույն տեղում, էջ 805—807։
3 Նույն տեղում, էջ 808։
4 Նույն տեղում, էջ 809։
5 Նույն տեղում, էջ 809—810։

Դյուբուան (Dubois) այցելել է Գառնի 1834 թ. մարտի 20-ին։ Նա նշում է Գառնիի մեծամեծ ավերակները, հատկապես ուշադրություն է դարձրել հեթանոսական տաճարի փլատակների վրա՝ տալով նրա գլխավոր ճակատի վերակազմությունը[1]։

---

[1] Dubois de Monperreux. Voyage antour du Caucase cher les Tcherkesses et les Abkhases, en Colchide, en Georgie, en Arménie et en Crimée, vol. III, էջ 386—389։ Ալիշան, Այրարատ, էջ 362—360։